ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0010 ք. Երևան, Կառավարական տուն 1

№ 02/05.1/15882-2021

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ՊԱՐՈՆ ԱՌՆԱԿ ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Ավետիսյան

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ և 77-րդ հոդվածների՝ Ձեզ ենք ներկայացնում՝

1) «Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-936-16.04.2021-ԳԿ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունները,

2) Հայաստանի Հանրապետության վարչապետի 2021 թվականի մայիսի 10-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող) նշանակելու մասին» N 500 - Ա որոշումը:

Հարգանքով՝

ԱՐՍԵՆ ԹՈՐՈՍՅԱՆ

Կատարող՝ Պ. Քացախյան

Հեռ. 010515686

«ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Պ-936-16.04.2021-ԳԿ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱ-ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

«Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նա-խագծի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարությունն առաջարկում է.

1. Նախագծի վերնագրից հանել «ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ» բառերը:

2. Նախագծի 1-ին հոդվածում՝

1) «հոդվածը» բառը փոխարինել «հոդվածի 1-ին մասը» բառերով.

2) լրացվող 1.11-րդ կետով առաջարկվող՝ «ուսուցման ազգային ռեեստր - ուսումնական ծրագրերի ու ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսուցման արդյունքների գնա-հատման և ճանաչման գործընթաց իրականացնողների և մասնակիցների տվյալների ազգային շտեմարան, որը ձևավորվում է մասնագիտացված ու գնահատված ուսուցումներ իրականացնելու, ոլորտի շահառուների համագործակցության հնարավորությունները ընդլայնելու, արդյունավետությունը բարձրացնելու, ինչպես նաև ծառայությունների մասին տեղեկատվությունը թափանցիկ և մատչելի դարձնելու նպատակով» հասկացության ձևակերպումը խնդրահարույց է, քանի որ ինֆորմալ ուսուցումը կենսափորձի արդյունքում ձեռք բերված գիտելիքը, հմտությունն ու կարողությունն է, և ինֆորմալ ուսուցման գործընթացն իրակա-նացնողների և մասնակիցների տվյալների ազգային շտեմարան անհնար է ստեղծել: Միաժամանակ նպատակահարմար չենք համարում հասկացության սահմանման մեջ նպատակի ներառումը, ուստի հասկացությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«1.11) ուսուցման ազգային ռեեստր - լրացուցիչ կրթության ծրագրեր իրակա-նացնողների և մասնակիցների ազգային շտեմարան:».

3) 1.12-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «Ուսումնառության արդյունքների գնահատում և ճանաչում՝ կրթության բնագավառի կառավարման պետական լիազոր մարմնի ներկայացմամբ Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատած ուսումնառության արդյունքների գնահատման և ճանաչման կարգին համապատասխանության փաստի հաստատում՝ անկախ դրանք ձեռք բերելու եղանակից»:

3. Նախագծի 2-րդ հոդվածը հանել և դրանով նախատեսված դրույթները կարգավորել ենթաօրենսդրական ակտերով, իսկ որոշ կարգավորումներ արդեն իսկ նախատեսված են նախագծի 5-րդ հոդվածում:

4. Նախագծի 4-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերը շարադրել հետևյալ խմբագ-րությամբ՝

«1) 6.1-ին կետը «կարգը» բառից հետո լրացնել «ներառյալ պետական նմուշի վկայականի և դրա ներդիրի ձևը. » բառերով.

2) 6.2-րդ կետը «կարգը» բառից հետո լրացնել «ներառյալ պետական նմուշի

հավաստագրի և դրա ներդիրի ձևը. » բառերով:»:

Միաժանակ պետք է հոդվածների համարակալումը վերանայել:

5. Նախագծի 5-րդ հոդվածում «հոդվածը» բառը փոխարինել «հոդվածի 1-ին մասը» բառերով, «մասերով» բառը՝ «կետերով» բառով և «9.7-րդ» բառից հետո լրացնել «9.8-րդ» բառը:

6. Նախագծում անհրաժեշտ է նախատեսել եզրափակիչ և անցումային դրույթներ՝ դրանցում ամրագրելով օրենքի ուժի մեջ մտնելու ժամկետը, ինչպես նաև նախագծով նախատեսված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի ընդունման ժամկետները և օրենքի այն դրույթները, որոնք գործելու են տվյալ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերն ուժի մեջ մտնելու պահից՝ նկատի ունենալով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասի դրույթները, որոնց համաձայն՝ եթե օրենսդրական ակտով (բացառությամբ՝ Սահմանադրության) սահմանված նորմը կարող է կատարվել միայն այդ ակտով նախատեսված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի ընդունմամբ, կամ դրա կատարումն ուղղակիորեն պայմանավորված է ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի ընդունմամբ, ապա օրենսդրական ակտի անցումային դրույթներով սահմանվում են նաև՝

1) օրենսդրական ակտի այն մասերը, որոնք գործելու են ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից.

2) ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի ընդունման նախատեսվող ժամկետը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 500 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ (ՀԱՐԱԿԻՑ ՋԵԿՈՒՑՈՂ) ՆՇԱՆԱԿԵԼՈՒ
Մ Ա Ս Ի Ն

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասը՝

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ Ժաննա Անդրեասյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում «Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը (Պ-936-16.04.2021-ԳԿ-011/0) քննարկելիս կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

10.05.2021
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

ՆԱԽԱԳԻԾ

Պ-936-16.04.2021-ԳԿ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության 1999 թվականի ապրիլի 14-ի ՀՕ-297-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 1.11-րդ եւ 1.12-րդ կետերով.

«1.11) ուսուցման ազգային ռեեստր՝ ուսումնական ծրագրերի ու ոչ ֆորմալ եւ ինֆորմալ ուսուցման արդյունքների գնահատման ու ճանաչման գործընթաց իրականացնողների եւ մասնակիցների տվյալների ազգային շտեմարան, որը ձեւավորվում է մասնագիտացված ու գնահատված ուսուցումներ իրականացնելու, ոլորտի շահառուների համագործակցության հնարավորություններն ընդլայնելու, արդյունավետությունը բարձրացնելու, ինչպես նաեւ ծառայությունների մասին տեղեկատվությունը թափանցիկ եւ մատչելի դարձնելու նպատակով.

1.12) ոչ ֆորմալ եւ ինֆորմալ ուսուցման արդյունքների գնահատումը եւ ճանաչումը՝ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի կողմից անձի կարողությունների եւ սահմանված որոշակի չափանիշների համապատասխանության փաստը հավաստելու գործընթաց է: Անձի փաստացի կարողությունները նրա նվաճած ուսումնառության արդյունքները եւ (կամ) որոշակի գիտելիքները, կարողությունները, ընկալումներն ու հմտություններն են՝ անկախ դրանք ձեռք բերելու եղանակից, իսկ համեմատելի չափանիշները որոշակի մասնագիտական չափորոշչի ուսումնառության արդյունքները, զբաղմունքի նկարագիրը կամ որոշակի կարողությանը ներկայացվող պահանջներ են.»:

Հոդված 2. Օրենքի 26-րդ հոդվածը՝

1) լրացնել հետեւյալ բովանդակությամբ 3.1-րդ, 3.2-րդ, 3.3-րդ, 3.4-րդ եւ 3.5-րդ մասերով.

«3.1. Լրացուցիչ կրթություն (ուսուցում) կարող է իրականացնել ցանկացած իրավաբանական եւ (կամ) ֆիզիկական անձ, որը կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգով գրանցվել է ուսուցման ազգային ռեեստրում: Մասնագիտական ուսումնական հաստատություններն իրենց հավատարմագրված մասնագիտությունների շրջանակներում կարող են ուսուցման ազգային ռեեստրում գրանցվել առանց նախապայմանների:

3.2. Ուսուցման ազգային ռեեստրում գրանցված իրավաբանական եւ ֆիզիկական անձանց կողմից իրականացվող լրացուցիչ կրթական ծրագիրը երաշխավորում է կրթության պետական կառավարման լիազորված մարմինը՝ սույն հոդվածի 3.3-րդ մասով ընտրված կազմակերպության անկախ փորձագետների մասնագիտական եզրակացության հիման վրա:

3.3. Լրացուցիչ կրթական ծրագրերի կազմակերպման եւ իրականացման գործընթացը համակարգում է կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգով ընտրված կազմակերպությունը: Ուսուցման գործընթացը կազմակերպելու նպատակով կազմակերպությունն իրականացնում է՝

1) պատվիրատուի եւ (կամ) մասնակցի կարիքի գնահատում, պատվերի հստակեցում.

2) իրականացնող կազմակերպության (եւ կամ անհատի) ընտրություն.

3) լրացուցիչ կրթական ծրագրի փորձաքննություն.

4) մշտադիտարկում:

3.4. Սույն հոդվածի 3.2-րդ մասով սահմանված հիմքերով իրականացված լրացուցիչ կրթական ծրագրի այն մասնակցին (ունկնդրին), որը ձեռք է բերել մոդուլային ծրագրով սահմանված ուսումնառության արդյունքները, շնորհվում է պետական նմուշի միանական փաստաթուղթ՝ վկայական եւ ներդիր, իսկ ոչ ֆորմալ եւ ինֆորմալ ուսուցման արդյունքների գնահատում եւ ճանաչում անցած անձին՝ հավաստագիր եւ ներդիր:

Վկայականի եւ հավաստագրի ներդիրները համարվում են տվյալ փաստաթղթի անբաժանելի մասը եւ առանց վկայականի կամ հավաստագրի վավեր չէ:

3.5. Լրացուցիչ ուսումնառության վկայականի, վկայականի ներդիրի կամ հավաստագրի, հավաստագրի ներդիրի պատվիրման, բաշխման, լրացման, հաշվառման եւ պահպանման կարգը սահմանում է կրթության պետական կառավարման լիազորված մարմինը:»,

2) 5-րդ մասում «միասնական նմուշի փաստաթուղթը» բառերից հետո շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«(վկայականը եւ ներդիրը, հավաստագիրը եւ ներդիրը)»:

Հոդված 4. Օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասում՝

1) 6.1-րդ կետի «կարգը» բառից հետո շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«ներառյալ պետական նմուշի վկայականի եւ դրա ներդիրի ձեւը.»,

2) 6.2-րդ կետի «կարգը» բառից հետո շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«ներառյալ պետական նմուշի հավաստագրի եւ դրա ներդիրի ձեւը.»:

Հոդված 5. Օրենքի 37-րդ հոդվածը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 9.1-րդ, 9.2-րդ, 9.3-րդ, 9.4-րդ, 9.5-րդ, 9.6-րդ եւ 9.7-րդ մասերով.

9.1) սահմանում է ոչ ֆորմալ եւ ինֆորմալ ուսուցման արդյունքների գնահատման եւ ճանաչման ենթակա մասնագիտությունների ցանկը եւ դրանց ներդման ժամանակացույցը՝ ըստ որակավորման աստիճանների.

9.2) սահմանում է սույն օրենքի 36-րդ հոդվածի 6.1-րդ եւ 6.2-րդ կետերով սահմանված կարգերի գործարկումը համակարգող, կազմակերպող ու օժանդակող կազմակերպության ընտրության կարգը եւ ըստ սահմանված պահանջների ընտրում համապատասխան կազմակերպությունը, որը հանդես է գալիս սոցիալական գործընկերների անունից (պետություն, գործատուներ եւ արհմիություններ).

9.3) հաստատում է ուսուցման ազգային ռեեստրի վարման կարգը եւ ստեղծում ուսուցման ազգային ռեեստրը՝ ընտրված համակարգող կազմակերպության հետ պայմանագրային պատվիրակման հիման վրա.

9.4) սահմանում է լրացուցիչ ուսումնառության վկայականի, վկայականի ներդիրի կամ հավաստագրի, հավաստագրի ներդիրի պատվիրման, բաշխման, լրացման, հաշվառման եւ պահպանման կարգը.

9.5) երաշխավորում է լրացուցիչ կրթության մոդուլային ծրագրերը.

9.6) հաստատում է ոչ ֆորմալ եւ ինֆորմալ ուսուցման արդյունքների գնահատում եւ ճանաչում անցկացնող գնահատողների ցանկը, որը ձեւավորվում է ուսուցման ազգային ռեեստրում գրանցված մասնագետների եւ փորձագետների տվյալներից.

9.7) հաստատում է ոչ ֆորմալ եւ ինֆորմալ ուսուցման արդյունքների գնահատում եւ ճանաչում անցած անձանց ցանկը եւ վավերացնում տրամադրվող հավաստագիրն ու ներդիրը.

9.8) սահմանում եւ հաստատում է ոչ ֆորմալ եւ ինֆորմալ ուսուցման արդյունքների գնահատման հիմքերը, գնահատման կենտրոններին ներկայացվող պահանջները եւ կողմերի իրավահարաբերություններն ապահովող պայմանագրի հիմնական պայմանները.»:

Հոդված 6. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

1. Անհրաժեշտությունը.

«Կրթության մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծի ընդունումը բխում է Սահմանադրության 6-րդ հոդվածի 2-րդ մասի կարգավորումներից, համաձայն որի «Սահմանադրությամբ նախատեսված մարմինները կարող են օրենքով լիազորվել ընդունելու ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր:»

«Կրթության մասին» օրենքի 3-րդ հոդվածի 1.1-1.7-րդ կետերի, 6-րդ հոդվածի 2.1-րդ մասի եւ 26-րդ հոդվածներով օրենքում ամրագրվել է, ոչ ֆորմալ եւ ինֆորմալ կրթության ոլորտը կանոնակարգելու, լրացուցիչ կրթական ծրագրերը (վերապատրաստումները, մասնագիտական ուսուցման դասընթացները, կարճաժամկետ ուսուցումները) կազմակերպելու եւ դրա արդյունքները պետության կողմից ճանաչելու, վկայագրելու հիմքերը:

Ի կատարումն «Կրթության մասին» օրենքի 6-րդ հոդվածի պահանջի՝ ՀՀ կառավարության 2015թ. սեպտեմբերի 10-ին N1062-Ն որոշումով հաստատվել է «Լրացուցիչ կրթական ծրագրերի կազմակերպման եւ իրականացման կարգը» եւ «Ոչ ֆորմալ եւ ինֆորմալ ուսուցման արդյունքների գնահատման եւ ճանաչման կարգը»: Նշված փաստաթղթով կրթության ոլորտի պետական կառավարման լիազորված մարմնին պատվիրակվել է նաեւ սահմանել մի շարք նորմատիվ ակտեր եւ ապահովել համապատասխան գործառույթներ:

2. Խնդիրները եւ կարգավորման նպատակը.

Մինչ սահմանադրական նորմի ուժի մեջ մտնելը որոշ փաստաթղթեր ընդունվել են, իսկ այնպիսին ինչպիսին է օրինակ «Լրացուցիչ ուսումնառության վկայականի, վկայականի ներդիրի կամ հավաստագրի, հավաստագրի ներդիրի պատվիրման, բաշխման, լրացման, հաշվառման եւ պահպանման կարգը» չի կարող հաստատվել առանց օրենսդրական լիազորող նորմի:

Ավելին, եթե ներկայումս անհրաժեշտություն առաջանա փոփոխություն կամ լրացում կատարելու արդեն ընդունված կարգերում եւ ընթացակարգերում, ապա նախարարությունը դա չի կարող ընդունել, քանի որ համաձայն սահմանադրության անցումային դրույթների, մինչ պատվիրակող նորը օրենքով սահմանելը ընդունված ակտերում փոփոխություն չի կարող կատարվել:

Նշվածից պարզ է դառնում, որ Հայաստանը ունենալով ոչ ֆորմալ կրթության եւ դրա արդյունքերի ճանաչման քաղաքականությունը, չի կարող ապահովել ամբողջական գործընթաց առանց ԿԳՄՍ նախարարության կողմից համապատասխան կարգեր ընդունելու լիազորող նորմերը:

Լրացուցիչ կրթական ծրագրերի միջոցով ոչ ֆորմալ կրթության համակարգման, ճանաչման ու պաշտոնական վկայագրման գործընթացը Հայաստանում ներդրվել է որպես ԵՄ-ՀՀ գործընկերության եւ աջակցության ծրագրի նախապայման, ինչպես նաեւ համարվում է ՄԱԿ-ի «Փոխակերպենք մեր երկիրը. Մինչեւ 2030 թվականը կայուն զարգացման օրակարգը» եւ «Կրթություն 2030. Դեպի ներառական եւ արդարացի որակյալ կրթություն ու կրթություն ողջ կյանքի ընթացքում բոլորի համար» Ինչհոնի հռչակագրի հիմնարար պարտավորություններից մեկը:

3. Ակնկալվող արդյունքը.

Օրենսդրական նախաձեռնությամբ հնարավոր կլինի կարգավորել օրենսդրական ճգնաժամը, ամրապնդել լրացուցիչ կրթական ծրագրերի կազմակերպման եւ իրականացման գործընթացներն ու Հայաստանում առավել արդյունավետ իրականացնել ոչ ֆորմալ եւ ինֆորմալ ուսուցման արդյունքների գնահատման, ճանաչման ու վկայագրման (հավաստագրման) ոլորտում ներդրված պետական քաղաքականությունը, ապահովել ստանձնած միջազգային պարտավորությունների կատարումը: